



05/30700-15
1/32.1/19201-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 1381-Ա

ք.Երևան

<29> 12 2015թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77.2 հոդվածը և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.28 կետը.

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու 2016 թվականի աշխատանքային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության պետին՝
 - 1) Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում ներկայացնել հաշվետվություն կատարված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ:

Ա.Երիցյան